

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳԵՂԱՐՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Լ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Ներկայումս թանգարանային զբոսաշրջությունը համարվում է զբոսաշրջության կարևոր ուղղություններից մեկը: Կառավարության որոշմամբ հստակեցվել և քարտեզագրվել են ՀՀ բազմաթիվ թանգարաններ: Սակայն կան դեռևս թանգարաններ, որտեղ զբոսաշրջային այցելությունների ցուցանիշը բավականին ցածր է: Հոդվածի նպատակն է ներկայացնել Գեղարքունիքի մարզի թանգարանները, որպեսզի դրանք ևս ճանաչվեն զբոսաշրջիկների կողմից և ընդգրկվեն զբոսաշրջային փաթեթներում:

Թանգարանային զբոսաշրջությունը զբոսաշրջության ձև է, որը ներառում է գիտական հետաքրքրություն ունեցող վայրեր, մասնավորապես գիտական թանգարաններ, պլանետարիումներ և այլն: Դա կարող է զգալիորեն նպաստել զբոսաշրջության զարգացմանը, քանի որ աշխարհում գիտության հանդեպ հետաքրքրությունն ավելի ու ավելի է աճում: Թանգարանային զբոսաշրջությունը կարող է զգալիորեն նպաստել աշակերտների և ուսանողների կրթական մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև հայ ժողովրդի՝ որպես հնագույն ազգի դարավոր մշակութային արժեքների պահպանմանն ու ցուցադրմանը:

Թանգարան հունարեն բառացի նշանակում է «Մուսայի տուն»: Այն գիտական, գիտալուսավորչական կառույց է, որտեղ հավաքագրվում, պահպանվում, ուսումնասիրվում, մասսայականացվում են բնապատմական, նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները՝ բնության և մարդկային հասարակության զարգացման մասին գիտելիքների սկզբնաղբյուրները¹: Թանգարանների ֆոնդերում հիմնականում կենտրոնացվում են իրեղեն առարկաներ, գրավոր աղբյուրներ և արվեստի ստեղծագործություններ: Ժամանակակից գիտական դասակարգմամբ՝ թանգարանները տարբերվում են ըստ տիպերի և ուղղվածության: Ըստ տիպերի լինում են գիտահետազոտական և ուսումնական, ըստ ուղղվածության՝ պատմության,

¹ Долженко Г. П., Основы туризма. Учебное пособие, Москва, Ростов-на-Дону, 2009, с.232

քնագիտության, արվեստագիտության, գրականության, տեխնիկայի և այլն: Առանձին խումբ են կազմում հուշային (մեմորիալ), ինչպես նաև կոմպլեքս թանգարանները:

Թանգարանների նախատիպերը երևան են եկել մարդկային հասարակության զարգացման այն փուլում, երբ առարկաների բնատիպերը սկսել են պահպանել ոչ թե կիրառական կամ որպես նյութական արժեքներ, այլ որպես վավերական, հուշային վկայականներ և գեղագիտական արժեքներ: Այդպիսիք են, օրինակ, Հին Եգիպտոսի տաճարներում եղած հավաքածուները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ), Կնոսի պալատի պահոցը Կրետե կղզում (մ.թ.ա. 16-րդ դար), Նինվեի պալատի գրադարանը (մ.թ.ա. 7-րդ դար) և այլն:

Հայաստանում թանգարանների նախատիպեր կային դեռևս Վանի թագավորության շրջանում (մ.թ.ա. 9-6-րդ դարեր) մայրաքաղաք Տուշպայում և այլ քաղաք-ամրոցներում: Միջնադարյան Հայաստանում երևան եկան իսկական թանգարանները: Հովհաննես Դրասխանակերտցին 9 - 10-րդ դարերում իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ երեք տիպի թանգարան է հիշատակում՝ արքունի, իշխանական տների և եկեղեցական: Հայկական թանգարանների կազմակերպման գործը զգալի չափով ընդլայնվեց 19-րդ դարում:

Արվեստի հուշարձանների պահպանումը և դրանց կենտրոնացումը թանգարաններում Եվրոպայում սկսվել է Վերածննդի շրջանում և առավել զարգացել 16-17-րդ դարերում նախ Իտալիայում, ապա Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և այլ երկրներում: Մեծ հռչակ են ունեցել պալատական հավաքածուները՝ կունստկամերները: Այդ շրջանում են ստեղծվել նաև անտիկ արվեստի հուշարձանների հավաքածուն Ֆլորենցիայում (Լ. Մեդիչի, 15-րդ դար), Հռոմում (Վատիկանի թանգարաններ, 16-րդ դար), Դրեզդենում (Ա. Սաքսոնների, 16-րդ դար) և այլն: Հայտնի են նաև Բրիտանական թանգարանը Լոնդոնում (1753 թ.), Լուվրը՝ Փարիզում (1793 թ.), Պրադոյի գեղարվեստի թանգարանը՝ Մադրիդում (1819 թ.), Մետրոպոլիտեն թանգարանը՝ ՆյուՅորքում (1870 թ.), գեղարվեստա-պատմական թանգարանը՝ Վիեննայում (1891 թ.) և այլն:

1719թ.-ին Պետերբուրգում բացվել էռուսական առաջին մասսակայան թանգարանը՝ Կունստկամերան, 1756 թ.-ին՝ Հրետանային պատմության թանգարանը և 1764 թ.-ին՝ Էրմիտաժը: Ավելի ուշ կազմակերպվել

են Տրետյակովյան պատկերասրահը, Գյուղատնտեսական թանգարանը, Ռուսաստանի պատմության թանգարանը, Պոլիտեխնիկական թանգարանը, ռուսական թանգարանը:

Սակայն ներկայումս աշխարհում կան բազմաթիվ թանգարաններ, որոնք ուշագրավ են իրենց յուրօրինակությամբ և ցուցանմուշներով: Աշխարհի ամենատարօրինակ և առանձնահատուկ թանգարաններից են համարվում.

1. «Վառված սննդամթերքի» թանգարանը Մասաչուսեթսում, որը Մասաչուսեթսի տեսարժան վայրերից է: Թանգարանի պատմությունն սկսվում է 1980-ականներից, երբ տավղահար Դեբորաա Հենսոն-Քոնենթը սկսեց ինչ-որ ճաշատեսակ տաքացնել իր տանը: Նա տարվեց երկար հեռախոսագրույցով: Երբ նա ավարտեց հեռախոսագրույցը և վերադարձավ խոհանոց, ճաշատեսակն արդեն ամբողջովին վառվել էր: Այն դարձավ Դեբորայի տուն-թանգարանի առաջին ցուցանմուշը: Ամենահայտնի ցուցանմուշներից են քաղցրահամ կարտոֆիլները, որոնք թույլ ջերմաստիճանի տակ եփվել են հինգ շաբաթ: Այդ ժամանակամիջոցում Հենսոն-Քոնենթը Մեքսիկայում էր: Հենսոն-Քոնենթը խրախուսում է թանգարանի հաճախորդներին լուսանկարել իրենց վառված ճաշատեսակները և դրանց լուսանկարներն ուղարկել իրեն՝ վեբկայքում տեղադրելու համար: Թանգարանի նշանաբանն է. «Միացրե՛ք ցածր ջերմաստիճանի ռեժիմը և երկար քնե՛ք»:

2. Կասկածելի բուժսարքավորումների թանգարանը Մինեսոտայի գիտության թանգարանում: Կասկածելի բուժսարքավորումների թանգարանը հիմնադրվել է հեքիմության ինքնակոչ մասնագետ Բոբ Մակքոյի կողմից: Թանգարանի հավաքածուում ներառված են տարբեր սարքավորումներ, որոնք նախատեսված են զանազան հիվանդությունների բուժման համար: Սարքավորումներից շատերը մինչ օրս ենթակա են շահագործման: Դրանցից է գանգաբանական (ֆրենոլոգիական) սարքը: Մարդիկ հավատում էին, որ այս սարքի շնորհիվ հնարավոր էր քարտեզագրել մարդու ուղեղը և ցույց տալ նրա բարոյականության ու խելքի մակարդակը:

3. Վինչեստերի խորհրդավոր տունը Կալիֆոռնիայում: Վինչեստերի խորհրդավոր տունը կառուցվել է 1800-ականներին Վիլյամ Ուիրթ Վինչեստերի կնոջ՝ Սարա Վինչեստերի կողմից: Ամուսնու մահից հետո նա ժառանգեց նրա գեների ընկերությունը: Մի պայծառատես Սարային հայտնեց, որ այն մարդկանց ուրվականները, ովքեր սպանվել էին իր ընտանիքին պատկանող

ընկերության գենքերով, բարկացած են նրա վրա: Նրանց հանգստացնելու միայն մի տարբերակ կար: Պետք էր մի այնպիսի տուն կառուցել, որի շինարարությունը երբեք ավարտին չէր հասցվի, այլապես Սարան կմահանար: Այսպիսով, 38 տարի շարունակ Սարան Կալիֆոռնիայում կառուցում էր մի տուն, որի արժեքը մոտ 6 մլն դոլար էր: Երբ նա մահացավ 1922 թ.-ին, տան սենյակների թիվը հասնում էր 160-ի: Չնայած դրան՝ տանը միայն 13 լոգարան կար: Սարային ասել էին՝ ոչ մի դեպքում միևնույն ննջարանում երկու գիշեր իրար հետևից չքնի: Սարան կարծում էր, որ իր քնելու տեղը անընդհատ փոխելով՝ կկարողանար շփոթեցնել ուրվականներին:

4. *Ծորակի ջրի թանգարանը* Պեկինում: Պեկինում գտնվող այս թանգարանում մոտ 130 առարկա կա, որոնք կապված են Չինաստանի ծորակի ջրի պատմության հետ: Այս թանգարանի ցուցանմուշները վկայում են Չինաստանի ու Արևմուտքի վաղ շրջանի համագործակցության մասին: Թանգարանում կան մի շարք ցուցանմուշներ, որոնք պատմական կարևորություն են ներկայացնում: Թանգարանում կարելի է տեսնել պաստառներ, որոնցում գովազդվում է ծորակի ջրի գյուտը: Ժամանակին չինացիներից շատերը զգուշանում էին և խուսափում ծորակի ջրի օգտագործումից: Նրանք «օտար ջուր» էին կոչում ծորակի ջուրը: Նրանց ժամանակ էր հարկավոր՝ ծորակի ջրի գյուտն ընդունելու համար:

5. *Կալունների թանգարանը* Մալայզիայում: Մալայզիայի Կուչինգ (թարգմանաբար՝ կատու) քաղաքում գտնվող այս թանգարանը նվիրված է կատուներին: Թանգարանի այցելուները, ներս մտնելով, կարող են ծանոթանալ ընտելացված կենդանիների մասին տեղեկությունների, ինչպես նաև կատուներ պատկերող արվեստի ստեղծագործությունների:

Այս թանգարանում ցուցադրված է մոտ 2000 արտեֆակտ, այդ թվում՝ 5000 տարվա պատմություն ունեցող կատվի մումիա, որն այստեղ է հասել Եգիպտոսից: Կատուների թանգարանի ամենահայտնի ցուցանմուշը աշխարհի ամենահազվագյուտ կատուներից մեկի՝ ֆելիս բադիայի չորացված գլուխն է: Այս կատուն հանդիպում է միայն Կալիմանտանում: Կատուների թանգարանը բավականին հայտնի է: Կուչինգի բնակչության շրջանում տարածված են կատուների հետ կապված տարբեր սնահավատություններ: Ասում են, որ ժամանակին Մալայզիայի ժողովուրդը կատուների հետ կապված մի տարօրինակ ավանդույթ ուներ: Մարդիկ կատվին իջեցնում էին ջրով լի թասի

մեջ և այնքան ժամանակ թողնում այնտեղ, որ քիչ էր մնում, կատուն խեղդվեր: Նրանք հավատում էին, որ սա կարող է օգնել, որ անձրև սկսի տեղալ:

Բազմապիսի տարօրինակ թանգարաններ կան աշխարհի շատ երկրներում, սակայն թանգարանների ստեղծման հիմնական գաղափարը արժեքավոր գեղագիտական ու գիտական ցուցանմուշների պահպանումն ու հանրությանը ներկայացնելն է:

ՀՀ-ում կան բազմաթիվ գործող թանգարաններ, որոնցում ցուցադրվող ցուցանմուշները մեծ արժեք են ներկայացնում: Երևան քաղաքում են գտնվում Մատենադարանը, Հայաստանի պատմության պետական թանգարանը, Ազգային պատկերասրահը, Գաֆեևեան թանգարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանը, «Մայր Հայաստան» ռազմական թանգարանը, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, բազմաթիվ այլ թանգարաններ ու տուն-թանգարաններ:

Թանգարաններ կան նաև Հայաստանի մարզերում: Գեղարքունիքի մարզում ևս կան թանգարաններ, որոնցից հայտնի է «Սևան» ազգային պարկի թանգարանը, Գավառ քաղաքի՝ Գեղարքունիքի երկրագիտական թանգարանը, Մարտունու երկրագիտական թանգարանը, Գավառի պետական համալսարանի Վարշամ Ավետյանի անվան պատմահնագիտական թանգարանը:

«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի բնագիտական թանգարանը ստեղծվել և գործում է 1996թ.-ից: Թանգարանի բուն նպատակն է հասարակությանը իրազեկ դարձնել Սևանի տարածաշրջանի շրջակա միջավայրին, նրա պատմությանը, ֆաունային, ֆլորային, ընդերքին և այլն: Թանգարանի ցուցանմուշների հավաքչական աշխատանքները սկսվել են ազգային պարկի հիմնադրման օրերից, ինչպես նաև ձեռք են բերվել գնման և նվիրատվության միջոցով:

Թանգարանում ներկայացված է շուրջ 700 միավոր առարկա՝ բոլորն էլ ցուցադրության ֆոնդերում: Թանգարանը չունի պահպանության համար նախատեսված ֆոնդեր: Ձեռք բերման աշխատանքները կատարվել են ամբողջ Գեղարքունիքի մարզի տարածքում և շարունակվում են նաև այսօր:

Թանգարանում ցուցադրությունը սկսվում է ժամանակագրական կարգով՝ ներկայացնելով Սևանի տարածաշրջանի պատմությունն ու ազգագրությունը:

Թանգարանն իրականացնում է հավաքչական, ուսումնասիրման, մշակման, պահպանման աշխատանքներ ըստ համապատասխան բաժինների: Այն ապահովում է նաև Սևանի տարածաշրջանին վերաբերող տեղեկատվության տրամադրում:

Թանգարանն ունի նաև գրադարան՝ համապատասխան գրականությամբ, որն ուսումնասիրվում է ոչ միայն «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի մասնագետների, այլ նաև բնակչության կողմից: Թանգարանում իրականացվում են միջոցառումներ, կինոդիտումներ, սեմինարներ, բանավեճեր, որոնք վերաբերում են Սևանա լճին, շրջակա միջավայրի աղտոտվածությանը, բնապահպանությանը և այլն: Անցկացվում են հանրամատչելի, ուսուցողական, ճանաչողական դասընթացներ, վիկտորինաներ: Պահպանվում է կապը դպրոցների, մանկապարտեզների, մանկապատանեկան տարբեր կենտրոնների, զբոսաշրջիկների հետ, ինչպես նաև իրականացվում են էքսկուրսիաներ տարբեր տարիքի անձանց հետ¹:

Գավառ քաղաքի «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը գործում է 1952թ.: Թանգարանն իր գործունեության տասնամյակների ընթացքում ոչ միայն մեծ աշխատանք է կատարում պատմական, մշակութային ժառանգության արժեքների հայտնաբերման ու պահպանման գործում, այլև այն դարձել է ՀՀ Գեղարքունիքի մարզի լավագույն մշակութային օջախներից մեկը: Թանգարանում պահվում և ցուցադրվում են 9100 ցուցանմուշներ, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի անցյալը՝ սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մեր օրերը: Թանգարանում կա 6 ցուցասրահ, որտեղ այցելուները հաղորդակից են լինում հայ ժողովրդի պատմական անցյալին, ազգային ազգագրական պայքարի էջերին, ծանոթանում են աշխատանքային այն գործիքներին, որոնք օգտագործել են մեր նախնիներն իրենց կենցաղում: Թանգարանի ֆոնդերն ամեն տարի համալրվում են նոր ցուցանմուշներով՝ գնման, նվիրատվության և արխիվային նյութերի (փաստաթղթեր, լուսանկարներ, մեդալներ և այլն) հավաքման եղանակով:

Թանգարանի հավաքածուները դասակարգվում են հետևյալ կերպ.
ա/ ազգագրական բաժին,
բ/ հնագիտական բաժին,

¹ <http://www.sevanpark.am/hy/tangaran-2.html>

զ/ նոր և նորագույն պատմության բաժին,
դ/ դրամագիտության բաժին,
ե/ գիտաօժանդակ ֆոնդ և այլ բաժիններ:

Մարտունու պատկերասրահը Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղն է: Այն ստեղծվել է 1978թ.¹ շրջիկ ցուցահանդեսների ֆոնդերից:

Մարտունու պատկերասրահը բացվել է 1978 թ. Մշակույթի նախարարության Նկարչական շրջիկ արվեստանոցից հատկացված ստեղծագործությունների հիման վրա: Շուրջ 200 թանգարանային առարկա՝ գեղանկար, քանդակ, գրաֆիկա ընդգրկող հավաքածուն ներկայացնում է 1960-1980-ական թթ. հայ կերպարվեստը, որը շարունակում էր նախորդ տասնամյակներին ձևավորված, կոմունիստական գաղափարաբանական պատգամներով ընթացող ուղին՝ «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» կարգախոսով²:

Պատկերասրահում եզակի նմուշ է համարվում ծառի կոճղում պատսպարված խաչքարը: Դա Քարվաճառի տարածքից, որպես վառելափայտ կտրված ու բերված ծառի կտոր է, որը ջարդելիս ի հայտ է եկել խաչքարը: Մի անգամ պատկերասրահի այցելուներից եղել է մի էքստրասենս, որը նկատել է, որ այդ էքսպոնատը օժտված է որոշակի էներգետիկ դաշտով, /հնարավոր է, երկար տարիներ խաչքարը մնալով ծառի «կենդանի» օրգանիզմում, ձեռք է բերել որոշակի էներգետիկ դաշտ/: Դրանից հետո պատկերասրահ այցելողները ձեռքը հպում են այդ կոճղին ու երազանք են պահումը: Ասում են երազանքը կատարվում է.....²:

Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ Հրանտ Հակոբյանի և համալսարանի պրոֆեսոր Վարշամ Ավետյանի նախաձեռնությամբ բուհում ստեղծվել է պատմագիտական ինքնատիպ թանգարան, որն ունի հայրենաճանաչողական, պատմագիտական, հնագիտական, ռազմահայրենասիրական, ուսուցողական կարևոր նշանակություն: Թանգարանում առկա են հազար հինգ հարյուրից ավելի հնագիտական,

¹ <http://www.gallery.am/hy/Branches/MartuniGallery/>.

² Գեղարքունիքի մարզի ուղեցույց:

ազգագրական, դրամագիտական, արվեստագիտական արժեքավոր նյութեր և վավերագրեր:

Թանգարանն ունի Հայոց ցեղասպանությանը, Արցախի ազատամարտին, ինչպես նաև Գեղարքունիքի տարածաշրջանին, Գավառի պետական համալսարանի ստեղծման պատմությանը նվիրված անկյուններ:

Թանգարանում հաճախ կազմակերպվում են բաց դասեր, հետաքրքիր միջոցառումներ, որոնց մասնակցում են բուհի ուսանողներն ու դասախոսները, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականները, համալսարանի հյուրերը:

Թանգարանի շնորհիվ ոչ միայն հարստանում են ուսանողների և այցելուների գիտելիքները, ամրապնդվում է երիտասարդների հայրենասիրական ոգին, այլև մոռացությունից փրկվում ու պահպանվում են հայ ժողովրդի կողմից անցյալում ստեղծված և մեր օրերում մասունք դարձած գանձերը¹:

Երբեմն համարվում է, որ թանգարանների պատմական ցուցանմուշները պարզապես հավաքածուներ են, որոնց ժամանակն արդեն անցել է, և դրանք այլևս ոչ մեկի պետք չեն: Այնուամենայնիվ, դրանք ունեն կարևոր սոցիալական գործառույթներ: Ն. Ա. Տոմիլովը հաշվառել է կյանքի 18 ոլորտներին պատկանող թանգարանային նմուշներ²:

Թանգարանային առարկաները ապացույցներ են հասարակական գործընթացների և մշակույթի զարգացման, այդ պատճառով կատարում են փաստագրման գործառույթ: Այդպես դրանք ապահովում են դարաշրջանների միջև կապը՝ անցյալն ինտեգրելով ներկային: Դրա հետ մեկտեղ թույլ են տալիս մարդկանց գիտակցել անցյալի և ներկայի նմանություններն ու տարբերությունները:

Թանգարանային հավաքածուներն ազդում են մարդկանց աշխարհայացքի ձևավորման վրա, քանի որ պայմաններ են ստեղծում մարդկային հասարակության և նրա սոցիալ-մշակութային միջավայրում բազմազանության դրսևորման համար, տալիս են ընդհանուր պատկերացումներ պատմության ու մշակույթի վերաբերյալ: Հաղորդակցական գործառույթն իրականանում է տարբեր ժամանակաշրջանների և մշակույթի

¹ <http://old.gsu.am/?go=museum>

² Томилов Н.А., Социальная роль музеев: современное состояние (по материалам Омской области) // Культурологические исследования в Сибири, 2014, №2, С. 111-119

ընկալման և շփման միջոցով՝ վերականգնելով տարբեր սերունդների և մշակույթների միջև եղած կապը:

Թանգարանային առարկաներն ունեն նաև տնտեսական գործառույթ: Նրանք բարձրացնում են հնագիտական առարկաների արժեքը, այդ թվում նաև ֆինանսական, պատճառ են դառնում, որ այն օգտագործվի ի շահ ժողովրդի, այդ թվում նաև արժեքների հետագա զարգացման համար:

Պատմական սոցիալ-մշակութային ժառանգությունը քաղաքական գործընթացներում կարող է որպես ժողովորդների պատմության ապացույց օգտագործվել՝ պետական գործունեության ձևավորման, դրա ձևի որոշման, ուղղության, խնդիրների և բովանդակության համար:

Թանգարանների դաստիարակչական գործառույթն այն է, որ այդ առարկաների միջոցով առաջանում է հարգանք անցյալի հանդեպ, զարգացնում է հայրենասիրությունը, ամրապնդում է երեխաների և երիտասարդների շրջանում պատմական հիշողությունը: Թանգարանային նմուշները ձևավորում են գեղագիտական ճաշակ:

Վերջապես, նրանք ունեն կառուցողական գործառույթներ: Նրանք ուժեղացնում են մասնակցությունը թանգարանների պատմամշակութային ռեսուրսների ավելացմանը:

Այսպիսով, թանգարանները ՀՀ-ում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզում ունեն կրթական, գիտական, մշակութային և զբոսաշրջային նշանակություն, սակայն դրանց ներուժը դեռևս ամբողջությամբ չի օգտագործվում զբոսաշրջության զարգացման համար: Ոչ բոլոր թանգարաններն են ներառվում զբոսաշրջային փաթեթներում: Կան թանգարաններ, որոնց գոյության մասին շատերն անգամ չգիտեն: Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է բոլոր թանգարանները քարտեզագրել, ներկայացնել հանրությանը և ներառել զբոսաշրջային փաթեթներում:

Բանալի բառեր՝ թանգարանային զբոսաշրջություն, թանգարան, պարկերասրահ, «Սևան» ազգային պարկի թանգարան, Գեղարքունիքի երկրագիտական թանգարան, Մարտունու պարկերասրահ:

Օգտագործված գրականություն

1. Долженко Г. П., Основы туризма// Учебное пособие, Москва, Ростов-на-Дону, 2009, с.232

2. <http://www.sevanpark.am/hy/tangaran-2.html>
3. <http://www.gallery.am/hy/Branches/MartuniGallery/>
4. <http://old.gsu.am/?go=museum>
5. Томилов Н.А. , Социальная роль музеев: современное состояние (по материалам Омской области) // Культурологические исследования в Сибири, 2014. №2, С. 111-119
6. Գեղարքունիքի մարզի ուղեցույց:

DEVELOPMENT OF MUSEUM TOURISM IN GEGHARKUNIK REGION

L. A. MKRTCHYAN

GSU Lecturer

Museums have educational, scientific, cultural and tourist significance in the Republic of Armenia as well as Gegharkunik Region, but their potential still is not fully used for tourism development. Not all museums are included in tourist packages. There are many museums which are not even known to many people. In order to fill that gap, it is necessary to map all the museums, to present to the public, and to include them in tourist packages.

РАЗВИТИЕ МУЗЕЯ ТУРИЗМА В ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

Л. А. МКРТЧЯН

Преподаватель ГГУ

Музеи в Республике Армения, а также в Гегаркуникской области имеют образовательное, научное, культурное и туристическое значение, но их потенциал до сих пор не полностью используется для развития туризма. Не все музеи включены в туристические пакеты. Есть музеи, о существовании которых многие даже не знают. Чтобы заполнить этот пробел, необходимо отобразить все музеи и включить их в туристические пакеты.